

ԱՄՈՍ ԿՈՉՎՈՂ ԱՆՈՒՇԱՐՈՏ ԲՈՒՅՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ
ՅՈՒՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՓՈՐՁ

ՌՈՒՋԱՆ ՓԱԼԱՆՋՅԱՆ

Հին աշխարհի տնտեսական կյանքում բացառիկ տեղ էր գրավում անուշահոտ բույսերից և դրանցից պատրաստված յուղերի արտադրությունն ու առևտուրը: Գոյություն ունեւր մասնագիտացում. կախված կլիմայից և հողերի որակից՝ որոշակի վայրերում մշակվում էին որոշակի անուշահոտ բույսեր¹:

Պլինիոս Ավագը իրեն հայտնի անուշահոտ յուղերի թվարկումը եզրափակում է մի օձանելիքի հիշատակումով, որը բնորոշում է որպէս «չքեղության գազաթնակետ»: Այն կոչվում էր «արքայական օձանելիք», քանի որ պատրաստվում էր հատկապէս պարթև արքաների համար²: Վ.Տարնը համարում է, որ վերջիններս դրանով էին թագավոր օձվում³: Պարթև Արշակունիները կենդանության օրոք աստվածացված էին⁴, հետևաբար, այն բույսերը, որոնց յուղից պատրաստված էր նրանց օձանելիքը, պետք է որ սրբազան համարվէին: «Արքայական օձանելիքի» կազմում Պլինիոսը հիշատակում է ամոմ կոչվող բույսի յուղը⁵: Իր աշխատության եզրափակիչ մասում Պլինիոսը ամոմը նշում է աշխարհի ամենաթանկարժեք ապրանքի թվում⁶: Իրոք, դրանում համոզվում ենք, համեմատելով Հռոմ ներմուծվող անուշահոտ յուղերի դները, որոնք հանդիպում են Պլինիոսի մոտ: Ամոմը Հռոմ էր ներմուծվում հումքի տեսքով՝ ինչպէս թարմ, այնպէս էլ փոշու ձևով: Թարմ ամոմի 1 ֆունտը (327.5գր) արժէր 60 դենար, իսկ փոշին՝ 8: Անուշահոտություններից ամենից թանկարժեքը Երիթովի բալսամոնն էր, որի ֆունտը 300 դենար էր, հնդկական նարդոսն արժէր 100 դենար: Զմուռսի ամենաարժեքավոր տեսակը՝ ստակտեն 3-ից 50 դենար էր, գարչինը՝ 10, իսկ միջերկրածովյան խունկը՝ ընդամենը 40 ասս, լավադույն կարդամոնն (հիլ)՝ արժէր 3 դենար⁷: Այսպիսով, ամոմը ամենաթանկարժեք անուշահոտություններից էր, և զիջում էր միայն Երիթովի բալսամոնին և հնդկական նարդոսին: Ի դեպ, Երիթովի բալսամոնի այդպիսի բարձր գինը պայմանավորված էր վերջինիս հազվագյուտութեամբ, քանի որ այն աճում

1 A t h e n a e u s. The Deipnosophists, in 7 vol., vol.VII, trans. by Ch. Gulick, Cambridge, London, 1961, XV, 688, e, f.

2 P l i n y. Natural History (այսուհետև՝ NH), in 10 vol., vol. IV, Cambridge, London, 1960, XIII, 18.

3 В.Т а р н. Эллинистическая цивилизация. М., 1949, с. 234.

4 А м м и а н М а р ц е л л и н. Римская история, перев. Ю. А. Кулаковского и А. И. Сонни, СПб., 2000, XXIII, 6 (4-6).

5 NH, XIII, 18.

6 NH, vol.X, transl. by D.E.Eichholz, C.-L. 1962, XXXVII, 204.

7 NH, vol.IV, XII.

էր միայն Հրեաստանի թագավորին պատկանող երկու այգիներում՝ Հետևաբար, Հրեաստանին էր պատկանում բալսամոնի առևտրի մենաշնորհը և այդ արժեքավոր բույսն այլուր ոչնչացվել էր⁹:

Ամոմի մասին Պլինիոսը գրում է, որ այն աճում է Հայաստանում՝ Օտենես մարզում (Ուտիք), Մեգիայում և Պոնտոսում¹⁰: Մ.թ. 1 դ. հուլյն բժիշկ Դիոսկորիդեսը ընդունում է, որ ամոմի որը նաև դեղաբույս էր) լավագույն տեսակը հայկականն է՝ «բավականին դուրեկան հոտով»¹¹: Ստրաբոնը և Սալլուստիոսը մատնանշում են Կորդուքը, որը հայտնի էր իր ամոմով՝ Ամոմի արտադրության մասին տեղեկություն կա Հովսեփոս Փլավիոսի «Հրեական Հնություններ»-ում: Հովսեփոսի այս հիշատակությունը խիստ ուշագրավ է, քանի որ վերջինս, շարադրելով հրեա ժողովրդի պատմությունը, ի տարբերություն Ստրաբոնի, կանգ չի առնում աշխարհագրական մանրամասների վրա: Իր մեծածավալ երկում Ադիաբենեի թագավորական ընտանիքի մասին պատմելիս¹² նա ընդամենը երկու անուշահոտ բույս է հիշատակում՝ երիքովի բալսամոնը, որը հրեաների համար մեծ նշանակություն ուներ և՛ որպես ծիսական բույս, և՛ որպես արտահանման ապրանք, և ամոմը: Այստեղ Հովսեփոսը հիշատակում է մի շրջան (Կարրոն), որտեղ մեծ քանակությամբ ամոմ էր արտադրվում: Մարզը տեղայնացնելու համար անհրաժեշտ է հանգամանորեն քննության առնել հիշյալ դրվագը:

Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսը, Բագայոս մականվամբ, ամուսնանում է իր քույր Հեզինեի հետ, որից ունենում է երկու որդի՝ Մոնոբազոսին և Իգատեսին: Թագավորը Իգատեսին դարձնում է իր գահաժառանգը, չնայած ավագ որդիներ ուներ Հեզինեից և այլ կանանցից: Եվ որպեսզի զերծ պահի Իգատեսին եղբայրների նախանձից, թագավորը ուղարկում է սրան Սպասինու ինարաքսի արքա Աբեններիգոսի մոտ, որը սիրով ընդունում է Իգատեսին, նրան կնություն տալով իր դստերը¹³: Սպասինու ինարաքսը, որտեղ իշխում էր Արշակունիների մի ճյուղը, գտնվում էր Տիգրիսի գետաբերանին: Աբեններիգոսը թագավորել է մ.թ. 5-21թթ.¹⁴: Իգատեսը ծնվել է մ.թ.ա. 3 կամ 2թ., և Աբեններիգոսի մոտ, հավանաբար, գնացել է մ.թ. 17 կամ 18 թ.¹⁵: Ծերացած Մոնոբազոսը, ցանկանում է մահից առաջ մեկ անգամ ևս տեսնել որդուն և ետ է կանչում նրան: Իգատեսը գալիս է հորը տեսության: Մոնոբազոսը ջերմորեն է նրան ընդունում, սակայն իր մոտ չի պահում, այլ, նվիրելով մի կավածք, ուղարկում է երկրից դուրս:

8 NH, XII, 111.

9 В. Т а р н. Նշվ. աշխ., էջ 234:

10 NH, XII, 48-49.

11 Диоскорид I. 14; В. Л а т ы ш е в. Известия древних писателей о Скифии и Кавказе. — Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 1947, №4, с. 272.

12 Стр а б о н. География в 17 кн., перев. Г.А.Стратановского, Л., 1964, XVI, I, 24 (այսուհետև՝ Стр а б о); Г а й С а л л ю с т и й К р и с п. Фрагменты "Истории". Кн. IV, IV, перев. В. С. Соколова. — ВДИ, 1950, №1.

13 J o s e p h u s. Jewish Antiquities (այսուհետև՝ Ant.), transl. by L. Feldman. vol IX. London, 1965, XX, 25.

14 Ant., XX, 17-23.

15 Ant., vol. IX, p. 401.

16 Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ադիաբենեի պետությունը և Հայաստանը. Երևան, 1980, էջ 77.

Այդ կալվածքը Կարրոնն էր, որի արգավանդ հողերը չափազանց բարենպաստ էին ամոմի մշակման համար: Շրջանը նշանավոր էր նաև նրանով, որ այնտեղ էին գտնվում Նոյի տապանի մնացորդները: Իզատեսը մնում է այդ մարզում մինչև իր հոր վախճանը: Մոնորագոսի մահվանից հետո Հեղինե թագուհին հավաքում է ավագանուն և հայտնում հանգուցյալ թագավորի կամքը՝ Իզատեսը պիտի ժառանգի հոր գահը: Ավագանու ներկայացուցիչները խորհուրդ են տալիս ժամանակավորապես մի որևէ վստահելի անձի թագավորեցնել Իզատեսի փոխարեն, մինչև վերջինիս գալը: Թագադրում են Իզատեսի ավագ եղբորը՝ Մոնորագոսին: Իզատեսը, լսելով հոր մահվան մասին, անմիջապես ժամանում է և ընդունում թագն իր եղբորից: Իզատեսը գահակալել է մ.թ. 28 կամ 29թթ., իսկ մահացել մ.թ. 53 կամ 54թթ.¹⁷:

Երբ Իզատեսն ապրում էր Խարաքսում, մի հրեա վաճառական, որը մեծ ազդեցություն էր ձեռք բերել Իզատեսի կանանց շրջանում, համոզում է նրանց ընդունել հրեական կրոնը, իսկ այնուհետև նաև Իզատեսին: Երբ Իզատեսը վերադառնում է Ադիաբենե, նա ի զարմանք իրեն տեղեկանում է, որ մայրը՝ Հեղինե թագուհին ևս, մի հրեայի ազդեցության տակ, ընդունել է հրեական կրոնը: Հեղինե թագուհին, համոզվելով, որ երկրում խաղաղություն է տիրում և իր որդին բարեհաջող թագավորում է, մեկնում է Երուսաղեմ, իր հետ տանելով մեծ քանակությամբ դրամ և նվերներ Երուսաղեմի տաճարին¹⁸: Կա տեսակետ, որ Իզատեսի և նրա մոր ընդունած հրեական կրոնը վաղ քրիստոնեությունն էր, քանի որ, իրը «հրեական կրոններից միայն քրիստոնեությունն էր, որ քարոզվեց Հրեաստանից դուրս»¹⁹: Սակայն իրականում դա այդպես չէ: Չմոռանանք, որ մեզ հասանելի չեն իզատեսի վերաբերում են մ.թ. 1 դ. առաջին քառորդին, իսկ այդքան վաղ շրջանում Հրեաստանից դուրս քրիստոնեության տարածման դեպքեր հայտնի չեն²⁰: Փաստերը ցույց են տալիս, որ հակառակը, սփյուռքի հրեական համայնքները զբաղվում էին հրեականության տարածումով²¹: Սակայն դա այն օրթոդոքսալ հրեականությունը չէր, որը հատուկ էր բուն Հրեաստանին: Սփյուռքի հրեաները Եհովայի հետ զուգահեռ պաշտում էին նաև տեղական աստվածներին, այսինքն առկա էր հելլենիզմին հատուկ սինկրետիզմը: Այսպես, սփյուռքի հրեաները Փոքր Ասիայի համապարփակ աստծուն՝ Սաբազիոսին նույնացնում էին իրենց Սաբազիթի հետ²²: Պտղոմեոս IV-ը, որ Դիոնիսոս աստծու մոլի երկրպագուն էր, Սաբազիոսի և Սարապիթի ենթադրյալ նույնությունից ելնելով, որոշեց, որ հրեաներն էլ են պաշտում Դիոնիսոսին, միայն ուրիշ անվան տակ, և քանի որ Դիոնիսոսը հավասարեցվել էր Օզիրիսի պաշտամունքի տարրեր պարուն-

17 Նույն տեղում, էջ 87:

18 Ant., XX, 34-53.

19 Հ. Մեկբոնյան, *Նշվ. աշխ.*, էջ 83:

20 История древнего мира под ред. И. Дьяконова, В. Нероной, И. Свенцицкой, т. III, М., 1983, с. 115-117.

21 Ant., vol. IX, p.205.

22 J. B. M i n n. Fusion of the Gods: A Religio-Astrological Study of the Interpretation of the East and the West in Asia Minor.- "Journal of Near Eastern Studies", vol. XV, N4, Chicago, 1956, p. 211-212.

նակող Սերապիսին. ապա Հնարավոր է, որ Պտղոմեոս IV-ը իր տերութայան մեջ փափագում էր հաստատել Դիոնիսոսի միասնական պաշտամունք տարբեր ազգութիւններին միավորելու նպատակով²³: Ստրաբոնի վկայութեամբ, մեդացիները, հայերը և բարելացիները Միջագետքի հիմնական բնակիչներն էին, և նրանց միջև շարունակ ընդհարումներ էին տեղի ունենում²⁴: Կարելի է ենթադրել, որ Ագիաբենեում կար նաև ստվար հրեա բնակչութիւն: Շատ հավանական է, որ Իգատես թագավորը ևս, Պտղոմեոս IV-ի օրինակով, ձգտում էր համախմբել իր պետութայան տարբեր էթնիկ տարրերին մի միասնական աստծու (թերևս Դիոնիսոսի) պաշտամունքի ներքո:

Փլավիոսների կայսերական ընտանիքի պաշտոնական պատմագիր Հովսեփոսն իր երկերը գրել է պրոպագանդիստական նպատակներով ցանկանալով հույն և հռոմեացի ընթերցողների առջև գովաբանել հրեականութիւնը, և զարմանալի չէ, որ նա մեծ հպարտութեամբ է գրում Իգատեսի հավատափոխութայան մասին: Սակայն գրան պետք է որոշ վերապահութեամբ մտնենալ: Եսայիայի, Եզրասի, Դանիելի և Եսթերի գրքերում բազմիցս խոսվում է հրեական կրոնի հանգեպ պարսից արքաների հոգատարութայան մասին, ինչն առիթ է տվել որոշ հեղինակների ենթադրել, որ Դարեհ I-ի օրոք Եհովայի պաշտամունքը հայտարարվել էր Աքեմենյան տերութայան գերագույն պետական պաշտամունք²⁵: Սակայն անշուշտ ճիշտ են այն գիտնականները, որոնք գտնում են, որ Աքեմենյան արքաների բարեհաճ վերաբերմունքը գեպի հրեական կրոնը չափազանցված է Աստվածաշնչի կազմողների կողմից, որոնք ձգտում էին իրենց ժողովրդին աշխուժութիւն հաղորդել, պատմելով, որ Պարսկաստանի հզոր արքաները ընդունում էին իրենց աստծուն և հովանավորում նրա երկրպագողներին²⁶: Ընդհանրապես հին կրոնները, առավել ևս հելլենիստական դարաշրջանում, պահպանողական և անհանգուրժող չէին այլազգի հավատալիքների նկատմամբ, որն արդյունք էր կեղծ հավատի վերաբերյալ հասկացութայան բացակայութիւնից: Այնպես որ զարմանալի ոչինչ չկա, եթե հրեա բնակչութիւն ունեցող Ագիաբենեի թագավորը պաշտել է նաև հրեաների աստծուն: Սակայն այդ հանգամանքը որոշ մասնագետների կողմից օգտագործվել է որպես կռվան Կարբոնի մարզի տեղայնացման ժամանակ²⁷:

Այժմ փորձենք պարզել, թե որտեղ էր գտնվում Կարբոնի շրջանը: Կա երկու հուշող հանգամանք. այն Ագիաբենեի սահմաններից դուրս էր և առնչվում էր ջրհեղեղի մասին առասպելի հետ: Կա կարծիք, որ խոսքը Հյուսիսային Միջագետքի Խառան քաղաքի մասին է²⁸: Սակայն դա անհավանական է²⁹: Խառանը Ագիաբենեի թագավորին չէր պատկանում, և Խա-

23 В. Т а р н. *Նշվ. աշխ.*, էջ 194, 206:

24 S t r a b o, XVI, I, 19.

25 М. Д а н д а м а е в, В. Л у к о н и н. Культура и экономика древнего Ирана, М., 1980, с. 334, 342.

26 М. Д а н д а м а е в, В. Л у к о н и н. *Նշվ. աշխ.*, էջ 334:

27 Հ. Մ Ե Լ Բ Ո Ն Յ Ա Ն. *Նշվ. աշխ.*, էջ 79-83:

28 Ant., vol. IV, transl. by H. Thackeray. London, 1961, p. 47.

29 Ant., vol. IX, p. 402.

ուսնի շրջակայքում չկա ոչ մի վայր, որը կապված լիներ ջրհեղեղի մասին ավանդության հետ:

Մեկ այլ տեսակետի հիմքում ընկած են «Հրեական պատերազմ»-ում Հովսեփոսի կողմից հիշատակված այն փաստերը, որ Հեղինե թագուհին Երուսաղեմում բուրգեր է կառուցել, և որ թագուհին և, Հովսեփոսի ասելով, նրա որդի Մոնոբաղոսը պալատներ են ունեցել Երուսաղեմում, և, հետևաբար, ըստ այս հեղինակի, Ադիաբենեի թագավորները Հայրենական կալվածք են ունեցել Երուսաղեմում, և դա հենց Կարրոնն էր³⁰:

Չնայած կա հրեական ավանդություն, որ Նոյի ուղարկած աղավնին իջել է Երուսաղեմի Ձիթենյաց լեռան վրա, քանի որ սուրբ հողը չէր տուժել ջրհեղեղից³¹, սակայն Հովսեփոսին հայտնի չէր այդ ավանդությունը, այլապես նա անպայման կհիշատակեր այն «Հրեական հնություններ»-ի ջրհեղեղին նվիրված բաժնում: Այսպիսով, Հովսեփոսը չէր կարող նկատի ունենալ Երուսաղեմը որպես Նոյյան տապանի հանգրվան:

Երբ Հեղինե թագուհին մեկնում էր Երուսաղեմ, նրա որդի Իղատեսը մեծ քանակությամբ դրամ պարզեց նրան: Այդ գումարով թագուհին օգնեց Երուսաղեմի բնակչությանը սովի ժամանակ, այնուհետև մնաց Երուսաղեմում: Բնականաբար, այնտեղ բնակության համար թագուհին պետք է իր դիրքին համապատասխան պալատ կառուցեր կամ դներ, որը նրա մահից հետո կանցներ ժառանգներին, բայց այդ դեպքերը տեղի են ունեցել արդեն Իղատեսի թագավորելուց հետո, իսկ ավելի վաղ, երբ Իղատեսը մինչև դահր ժառանգելը բնակվում էր Կարրոնում, ոչ մի հիշատակություն չկա այն մասին, թե Ադիաբենեի արքայական ընտանիքից որևէ մեկը կալվածք ուներ Երուսաղեմում: Հովսեփոսը այնքան ճշգրտորեն է նշում Հեղինե թագուհու պալատի և բուրգերի տեղադրության վայրը, որ անկասկած լավատեղյակ էր, և անհնարին է, որ Կարրոնը, Նոյյան տապանի մնացորդներով հանդերձ, Երուսաղեմում գտնվելու դեպքում, չչեչտեր այդ հանդամանքը: Այսպիսով, վերոհիշյալ վարկածը հեռու է ճշմարտանմանությունից:

Երբ Իղատես թագավորը մահանում է, գահը ժառանգում է նրա ավագ եղբայր Մոնոբաղոսը: Թագավոր դառնալուց հետո Մոնոբաղոսը իր եղբոր և մոր աճյունները ուղարկում է Երուսաղեմում թաղելու: Ըստ երևույթին, Իղատեսի որդիներից ոմանք բնակվել են Երուսաղեմում, որտեղ նրանց տատր ապարանքներ ուներ, և անշուշտ, «Հրեական պատերազմ»-ի մեջ հիշատակված Մոնոբաղոսի պալատը պատկանել է Իղատեսի որդիներից որևէ մեկին, որը կարող էր իր պապի անունով Մոնոբաղոս անվանված լինել և ոչ թե Իղատեսի ավագ եղբորը՝ Ադիաբենեի Մոնոբաղոս թագավորին, որը խորթ էր համարում հրեական կրոնն ու ավանդությունները³² և հետևաբար դժվար թե ձեռնամուխ լիներ Երուսաղեմում ապարանքի կառուցմանը:

30 Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 79-81:

31 Д ж. Ф р е з е р. Фольклор в Ветхом Завете. М., 1985, с. 84.

32 Ant., XX, 75-76.

Գերմանացի ճանաչված գիտնականներ Մարքվարտը և Բոխարտը ենթադրել են, որ Հովսեփոսը Կարրոն ասելով նկատի ունենում էր Կորդուքը: Նրանք համարում էին, որ Կարրոնը վրիպակ է, պեք է լինել Կարդոն³³:

Ջրհեղեղի մասին բաբելոնյան ավանդույթները հայտնի է բաբելոնացի քուրմ Բերոսոսի (մոտավորապես մ.թ.ա. 330-250թթ.) շնորհիվ, որը հունարեն լեզվով գրել է իր երկրի պատմությունը: Չնայած նրա աշխատությունը մեզ չի հասել, որոշ հատվածներ բարեբախտաբար պահպանվել են հույն պատմիչների մոտ: Ըստ Բերոսոսի, Ջրհեղեղից հետո տապանը կանգ է առնում Հայաստանում Կորգվաց լեռների վրա: Բերոսոսի գրքի այս մասը բառացիորեն մեջ է բերում Հովսեփոսը³⁴: Հետևելով այս ավանդույթին, մինչև XI դ. Հայ մատենագիրները իբրև տապանակիր լեռ մատնանշում են Կորդուքի Արարատ (Ջուգի-դաղ) լեռը³⁵: Վերջապես և՛ Ստրաբոնը և՛ Սալլուստիոսը հիշատակում են Կորգուքում աճող ամոմը: Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհագրություն»-ում նշվում է, որ Կորդուքի Հարևան Տմորիք գավառում աճում էր ամոմ³⁶: Թվում է, թե ամենահավանականը Կորդուքը որպես Կարրոն ընդունելն է: Սակայն կան որոշ փաստեր, որոնք դժվար կլինի մեկնաբանել այս վարկածը ընդունելու դեպքում: Նախ մենք չունենք ոչ մի տվյալ այն մասին, որ Կորդուքի տարածքից հողեր պատկանելիս լինեին Ադիաբենների թագավորին, որպեսզի նա իրավասու լիներ դրանք նվիրել իր որդուն: Մ.թ.ա. II դ. Արտաշես I-ը Հայաստանին է միացնում Տմորիքը, իսկ նրանից մեկ դար հետո մ.թ.ա. 80-ական թվականներին Տիգրան II-ը նվաճում է Տմորիքից արևմուտք ընկած Կորդուքը: Մ.թ.ա. 66 թ. Տիգրանի և Հռոմեական ղոբավար Պոմպեոսի միջև կնքված համաձայնագրով Կորդուքը մնում է որպես Մեծ Հայքի անբաժանելի մաս, և չնայած հետագայում պարթևների Հրահատ III թագավորը հավակնություններ է ներկայացնում Կորդուքի նկատմամբ, Պոմպեոսը լուծում է այդ վեճը հօգուտ Տիգրանի:

Ընդունենք, որ Կորդուքի տարածքից որոշ սահմանամերձ հողեր կարող էին պատկանել Ադիաբենների թագավորին, պարզապես այդ փաստը չի արձանագրվել պատմական աղբյուրներում: Բայց, նախ՝ Կորդուքի Ջուգի-դաղ լեռնագագաթը ամենևին էլ սահմանամերձ չէ Ադիաբեններին, և եթե այդ լեռան շրջակայքի մասին է խոսքը, ուրեմն համարյա ողջ Կորդուքը պատկանել է Ադիաբենների Մոնոբազոս արքային, իսկ դա հակասում է պատմական իրողությանը: Երկրորդ՝ Մեծ Հայքի Կորճայք նահանգի, որի գավառներից էր Կորդուքը, կազմում չի հիշվում Կարրոն կամ թեկուզ նման աշխարհադրական միավորի անվանում³⁷: Եվ վերջապես, մի կարևոր հանգամանք. Կորդուքը սահմանակից էր Ադիաբեններին, և այնտեղից Ադիաբեններ կարելի էր հասնել ամենաշատը մի քանի օրվա ընթացքում, իսկ, ինչպես տեսանք, որոշ ժամանակ է պահանջվել, մինչև իգատեսը Կարրո-

33 Ant., vol. IX, էջ 402. Վ. Ի ն գ լ ի գ Ե Ե Ե. Հայաստան Սուրբ Գրքի մեջ. Վիեննա, 1947, էջ 17:

34 Ant., I, 93, vol. IV.

35 Վ. Ի ն գ լ ի գ Ե Ե Ե. Նշվ աշխ., էջ 45-62:

36 Ղ. Ա լ ի շ Ե Ե. Հայրուսակ կամ Հայկական բուսաբանություն. Վենետիկ, Ս. Ղազար, 1895, N1404:

37 Ս. Ե Ե Ե Ե Ե Ե. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի». Երևան, 1963.

նից հասել է Ագիաբենե և տիրացել հոր գահին: Երկու-երեք օրվա համար չարժեք վտանգի ենթարկվել, թագը վստահելով ավագ եղբորը, մանավանդ որ հետագայում նրա նյութած դավերը Իգատեսի դեմ ցույց տվեցին, որ Մոնոբագոսը այնքան էլ վստահելի չէր և կարող էր նաև չվերադարձնել թագը: Անկասկած, Հեղինե թագուհին և Ագիաբենեի ավագանին ստիպված էին դիմել այդ քայլին, քանի որ Իգատեսի այնքան էլ մոտիկ չէր գտնվում և որոշ ժամանակ էր հարկավոր, մինչև որ նա կարողանար վերադառնալ:

Եվ այնուամենայնիվ, եթե Կարրոնը Կորդուքում չէր, ապա որտե՞ղ էր: Անկասկած՝ Հայաստանում, քանի որ որպես Ջրհեղեղից փրկված տապանի հանգրվան՝ Հովսեփոսին հայտնի էր միայն Հայաստանը³⁸, չնայած կան նաև այլ վայրեր, որոնց հետ կապված են Ջրհեղեղի մասին զրույցներ³⁹: Իր «Հրեական հնություններ»-ի առաջին գրքում, Ջրհեղեղի մասին պատմելիս, Հովսեփոսը բերում է երկու տարբեր ավանդություններ: Առաջինը դա արդեն հիշատակված քաղվածքն է Բերոսոսի աշխատությունից, իսկ երկրորդը Օգոստոս կայսեր և Հերովդես Մեծի ժամանակակից հույն դրող Նիկոլայոս Դամասկացու «Տիեզերական պատմություն»-ից է վերցված: Եթե մեզ հետաքրքրող վայրը Բերոսոսի հիշատակած Կորդուքի հետ կապ չունի, ուրեմն այն պետք է փնտրել Նիկոլայոս Դամասկացու աշխատություններից բերված հատվածում: Ահա թե ինչ է նա գրում. «Հայաստանում Մինյաս երկրի վրա վեր է խոյանում մի հսկա լեռ, Բարիս անունով, որի վրա մեծ Ջրհեղեղի ժամանակ շատերը ապաստանել են, և այսպես ազատվել: Մեկը տապանով նավարկել է և լեռան դադաթը հասել, և այնտեղ երկար ժամանակ մնում էին նավի մնացորդները: Գուցե դա միևնույն մարդն է, ում մասին որ Մովսեսը, հրեա օրենսդիրը, դրել է»⁴⁰: Ֆրիդրիխ Մուրադը Մինյասը նույնացնելով Ս. Գրքի Միննիի՝ ասորեստանյան արձանագրությունների Մաննայի հետ, Բարիս լեռը համարում է Մեծ Մասիսը: Սակայն Մարքվարտը իրավացիորեն հերքել է այս տեսակետը, անհավանական համարելով մ.թ.ա. I դ. մատենագրի կողմից որպես Բարիս լեռան դիրքի ճշտման վայր մի պետության հիշատակումը, որը մ.թ.ա. VI դ. չքացել էր պատմության թատերաբեմից, և ընդդեմելով, որ Նիկոլայոս Դամասկացուց երկու դար առաջ ապրող հեղինակները արդեն գաղափար չունեին Միննիի մասին: Այս նկատառումները հայտնելուց հետո Մարքվարտը եզրակացնում է, որ Մինյասը դա Վանա լճի հյուսիսում գտնվող Մանազկերտն է, հիմնադրված ուրարտական Մենուա թագավորի կողմից, որի անունը քաղաքի անվան մեջ մնացել է իրանական ձևով՝ Մանավագ-կերտ: Մարքվարտի այս կարծիքին համամիտ է նաև Բելքը⁴¹: Մանազկերտը, հավանաբար, ուրարտական արձանագրությունների Մենիգայանի բնակավայրն է⁴²: Իսկ Բարիս լեռը Մարքվարտը նույնացնում է Սիփանի հետ⁴³:

38 Ant., I, 89–95.

39 Д. ж. Ф р е з е р. Նշվ. աշխ., էջ 65–159:

40 Ant., I, 95.

41 Վ. Ի ն գ լ ի գ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 28–30:

42 Н. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 141.

43 Վ. Ի ն գ լ ի գ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 31–32, 106:

Սիփանը, որը կոչվում էր նաև Մասիք կամ Նեխ-Մասիք, իսկ ըստ Փավստոս Բուզանդի՝ Մեծ Մասիս⁴⁴։ Այրարատի Մեծ Մասիսից հետո Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթն է (4434մ)։ Հայաստանում իրոք գոյություն ունենալով ավանդություն, որ Նոյը ջրհեղեղից հետո իջել է Սիփանի գագաթին⁴⁵։

Զ. Ֆրեզերը հին հունական ավանդության համաձայն՝ Բեովտիայում տեղի ունեցած ջրհեղեղը բացատրում է այն հանգամանքով, որ Կոպայան լիճը, ելք չունենալով, պարբերաբար դուրս էր գալիս իր ափերից, ողողելով շրջակայքը։ Այդ երևույթները շարունակվում էին նաև Ֆրեզերի ժամանակ։ Լճի շրջակայքի մի բնակիչ պատմել էր նրան, որ իրենք ստիպված թողել էին իրենց գյուղը, քանի որ այն ամբողջովին ողողվել էր ջրով⁴⁶։ Անգլիացի երկրաբան Լինչը, Վանա լիճը հետազոտելիս, ուշադրություն է դարձրել, որ ջրի մակարդակը շարունակ բարձրանում է, ողողելով շրջակա բնակավայրերը։ Այդ ավերածությունների հետքերը նա գտել է Ադիլլեզում (Արծկե) և Ախլաթում (Խլաթ), իսկ Արճեչի բնակչությունը ընդմիջտ լքել էր քաղաքը ջրհեղեղի հետևանքով⁴⁷։ Բնականաբար այս դեպքերը պետք է իրենց արձագանքը գտնեն տեղի ժողովրդական ավանդություններում, իսկ Հովսեփոս Փլավիոսը, ավելի առասպելական երանգ տալու համար Իգատեսի հավատափոխության պատմությանը, տեղական ջրհեղեղի մասին վերհուշը կապել է Նոյի հետ։

Ըստ «Աշխարհացույց»-ի Նեխ-Մասիք (Սիփան) լեռը գտնվում էր Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Խորխոռունիք, Ապահունիք և Աղիովիտ գավառների սահմանագլխում։ Խորխոռունիք, Ապահունիք և Հարք գավառների միջև «Աշխարհացույց»-ը նշում է Կորի կամ Կորո ձոր գավառը, որն ընդգրկում էր Արածանիի վտակ Կորոձոր գետի հովիտը, Խաչան (Խաչլու) լճի շրջանը ներառյալ⁴⁸։ Ամենայն հավանականությամբ, այս Կորի գավառն էլ նկատի ունենալով Հովսեփոսը Կարրոնի շրջան ասելով։

Հարքի և Տարոնի բարեբեր, լավ մշակված հովիտների մասին, «որտեղ ցանքերը հնձված էին», գրում է Տակիտոսը⁴⁹։ 1898թ. ամռանը Հայաստան այցելելու ժամանակ Լինչը մանրամասն հետազոտել է այս շրջանները, բարձրացել Սիփան, Նեմրութ, Խամուր և Բյուրակն լեռնագագաթները։ Ահա թե ինչ տեսարան էր բացվել նրա առջև Խամուրի լեռներից. «...Մյուս կողմից ձեր առջև է Մուրադի (Արածանի-Ի. Փ.) ավազանը, լայնարձակ, մշակված դաշտավայրի վրա իր ողջ վեհությունը վեր խոյացող Սիփանի հետ մեկտեղ։ ... Եվ մերձավոր Ասիայի ոչ մի ուրիշ վայր ավելի հարմար չի ծաղկուն և բարձր քաղաքակրթությամբ օժտված երկրի շտեմարան լի-

44 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Պատմություն Հայոց, III, Ի, թարգմ. Ստ. Մալխասյանցի. Երևան, 1968, էջ 108։

45 Թ ո վ մ ա Ա Ր Ժ Ր Ո Ն Ի և Ա ն ա ն ու ն. Պատմություն Արժրունյաց տան, թարգմ. և ծանոթ. Վ. Վարդանյանի. Երևան, 1985, էջ 514։ Վ. Բ ն գ լ ի ս ե ա ն նշվ. աշխ., էջ 86-87, 106։

46 А ж. Ф р е з е р. Նշվ. աշխ., էջ 88-89։

47 X. Ф. Б. Л и н ч. Армения, т. II, Турецкие провинции, Тифлис, 1910, с. 66-67։

48 Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 61։

49 К о р н е л и й Т а ц и т. Анналы, XIV, 24, Сочинения в 2-х томах, т. I, перев. А. Бобовича, Л., 1969։

նելու համար»⁵⁰: Բուլանդի շրջանի (որն ընդգրկում էր հին հայկական Հարթ և Կորի գավառները) հողերի մասին Լինչը գրում է, որ դրանք ամենաբերրիներից են Հայաստանում: Նա դա բացատրում է կրային մերգելի և հրաբխային բեկորային հանքատեսակների հաջող միացմամբ, իսկ հացահատիկն էլ գերազանց որակի է⁵¹: Այժմ պարզ է դառնում, թե ինչու է Հովսեփոս Փլավիոսը ընդգծում, որ այդ վայրի հողերը արտակարգ էին ամոմի մշակման համար:

Ներկայիս բուսաբանությունը ամոմ անվան տակ հայտնի է կոճապղպեղազգիների ընտանիքի հիլին (*Cardamomum*) մոտիկ մի բույս՝ այսպես կոչված խոշոր հիլ կամ մելեդետյան պղպեղ (*Amomum Melegueta*), որն աճում է Աֆրիկայի և Ասիայի արևադարձային գոտիներում: Սակայն այն վայրերի հիշատակումը, որտեղ աճում էր այդ բույսը՝ Հայաստան, Մեդիա, Պոնտոս, անհնարին են դարձնում ներկայիս ամոմի և հին հեղինակների հիշատակած բույսի նույնացումը: Քանի որ յավագույն ամոմը հայկականն էր, պետք է ենթադրել, որ այն տեղական բույս էր:

Բնականաբար, հարց է ծագում, եթե մեր հետևությունները ճիշտ են և Կարրոնի մարզը դա հայոց Կորի գավառն է, ապա ինչու՞ պետք է Մեծ Հայքի ամենաարգավանդ հողերը գտնվեին Ազիաբենեի արքայական ընտանիքի իրավասությունների ներքո:

Ինչպես տեսանք, Ազիաբենեի թագավորի անունը Մոնոբադոս էր, մականունը՝ Բազայոս: Ուսումնասիրողները եկել են այն եզրակացություն, որ Ազիաբենեի թագավորական ընտանիքը և մեր Մանավազյան, Բզնունի, Խորխոռունի նախարարական տները պետք է որ միևնույն ծագումն ունենան⁵²: Դառնալով Մովսես Խորենացու տվյալներին, թվարկված նախարարությունների ցուցակին պետք է ավելացնել նաև Ապահունիներին և Որդունիներին⁵³: Նշված նախարարությունները առաջացած են համարում Ազիաբենեի արքայական տան սերունդներից: Սակայն Խորենացին հաղորդում է, որ հիշյալ նախարարական տները սերում են Հայկի որդիներ Խոռից, Մանավազից և Մանավազի որդի Բազից⁵⁴: Եթե տվյալներ լինեին Խորխոռունի, Բզնունի, Մանավազյան, Ապահունի և Որդունի նախարարների ուրիշ տեղից գաղթած լինելու վերաբերյալ, Պատմահայրը անպայման կգրեր այդ մասին, ինչպես որ գրում է Գնթունիների քանաանյան ծագման մասին⁵⁵: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ Ազիաբենեի թագավոր Մոնոբադոսի տոհմը Ազիաբենեի տեղացի հայերից էր, իսկ այնտեղ, ինչպես նշվեց, հայերը բնակչության հիմնական տարրն էին կազմում: Բայց Մոնոբադոս անունը և Բազայոս մականունը մատնանշում են թագավորի ազգակցական կապը Վանա լճի հյուսիսի իշխանական ընտանիքների հետ, իսկ վերջիններս, համաձայն Մովսես Խորենացու, ծագում էին հայերի նա-

50 X. Փ. Բ. Ա ի ի չ. Նշվ. աշխ., էջ 452:

51 Նույն տեղում, էջ 444:

52 Վ. Ի ն գ լ ի գ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 30: Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). Հ. I, Երևան, 1971, էջ 835: Հ. Մ Ե լ ք ո ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 134-139:

53 Մ ո վ ս ե ս Խ ո ռ Ե ն ա գ ի. Հայոց Պատմություն, I, ԺԲ, II, Ը, թարգմ. Ս. Մալխասյանի. Երևան, 1961, էջ 103-158:

54 Նույն տեղում, I, ԺԲ, էջ 103:

55 Նույն տեղում, II, Է, էջ 154:

խաճայր Հայկից. որի մահվանից հետո Հայկի որդի Արամանյակը «իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին իրենց ամբողջ աղխով. ինչպես Մանավազի որդի Բագին, թողնում է Հարք կոչված տեղում: Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը. իսկ նրա որդի Բագը ժառանգում է աղի ծովի Հյուսիս-արևմտյան ափը և գավառն ու ծովը կոչում է իր անունով: Ասում են. որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նահապետությունները. նաև Որդունի կոչվածը... Իսկ Խոռը բազմանում է Հյուսիսային կողմերում, շեներ է հիմնում. և ասում են. որ նրանից սկսած մինչև այժմ շարունակվում է Խորխոռունիների ցեղի մեծ նախարարությունը»⁵⁶: Այստեղից հետևում է, որ Մանավազյանները, Բզնունիները, Խորխոռունիները, Որդունիները, իսկ ըստ Խորենացու մի այլ հիշատակության⁵⁷, նաև Ապահունիները, Հնագույն ժամանակներից բնակվել են Վանա լճից Հյուսիս-արևմուտք ընկած տարածքում: Հետևաբար, ավելի հավանական է, որ Մոնոթագոսը կամ նրա նախնիներն են այս շրջանից գնացել Ագիաբենն և այնտեղ հասել թագավորական աստիճանի. պահպանելով իրենց ժառանգական տիրույթները Հայաստանում: Փորձենք բացահայտել այն քաղաքական նախադրյալները, որոնք կարող էին նպաստել Հայ իշխանին բարձրանալ Ագիաբեննի գահ:

Մ.թ.ա. II դ. վերջերին, Սելևկյանների պետության փլուտակների վրա, պարթևների հովանավորությամբ և որպես նրանցից կախյալ պետություններ, ստեղծվում են Օսրոյեննի, Կորդուքի, Ագիաբեննի, Հադրախի թագավորությունները: Թե ովքե՞ր են եղել Ագիաբեննի գահին թագավորության ստեղծման սկզբից, հայտնի չէ⁵⁸: Մ.թ.ա. 80-ական թվականներին Տիգրան II-ը գրավեց պարթևների գերիշխանության տակ գտնվող պետությունները՝ Կորդուքը, Ագիաբենն, Արվաստան-Միգդոնիան՝ Մծրին մայրաքաղաքով և Օսրոյենն: Այնուհետև Սելևկյաններից նվաճելով Ասորիքը, Տիգրանը ստեղծում է իր հսկայածավալ տերությունը: Ասորիքի վարչապետ նշանակվեց Տիգրանի մերձավորներից մեկը՝ Բագադատեսը (Բագարաար): Հյուսիսային Միջագետքի երկրների՝ Օսրոյեննի և Միգդոնիայի վրա Տիգրանը վերակացու կարգեց իր եղբորը՝ Գուրասին: Մեդիա-Ատրոպատեննի թագավոր Միհրդատը Տիգրանի փեսան էր⁵⁹: Ակնհայտ է, որ Կորդուքում և Ագիաբեննում ևս Տիգրանը պետք է իշխանության զուլուկանգնեցներ վստահելի մարդկանց իր ազդակիցներից կամ մերձավորներից, այլպես դժվար կլինեին կառավարել այդ բազմատարր տերությունը: Թե ո՞վ էր Ագիաբեննի թագավորը, հայտնի չէ: Սակայն ուշադրություն է դրավում մի հանգամանք: Ըստ Պլուտարքոսի, Տիգրանը Ագիաբենն նվաճելուց հետո դաժանորեն ավերում է այն և բնակիչներին գաղթեցնում իր մայրաքաղաք⁶⁰: Որքան էլ որ չափազանցրած լինի հույն գրողը, փաստ է, որ Տիգրանը նվաճած երկրների բնակչությանը տեղահանում էր և վերա-

56 Նույն տեղում, I, ԺԲ, էջ 103.

57 Նույն տեղում, II, Ը, էջ 158:

58 Հ. Մեկրոսյան. նշվ. աշխ., էջ 55:

59 ՀժՊ. Հ. I, էջ 562, 568.

60 П л у т а р х. Лукулл (այսուհետև՝ Lucul), XXVI, перев. С. Аверинцева. Избранные жизнеописания, в двух томах, т. II, М., 1987.

բնակեցնում իր մայրաքաղաքում⁶¹: Թվում է թե Ադիաբենների թագավորը պետք է ատելութամբ լցվեր Տիգրանի հանդեպ և հարմար առիթի դեպքում ապստամբեր: Այդպիսի առիթ ներկայանում է. Լուկուլլոսը փորձում է Տիգրանի տերութայան կազմի մեջ մտնող երկրների կառավարիչներին կաշառելով թեքել իր կողմը: Նրան հաջողվում է գայթակղել Կորդուքի թագավոր Ջարբինոսին, որը դավաճանում է Տիգրանին: Սակայն Ադիաբենների թագավորը հավատարիմ է մնում հայոց արքային, իսկ Տիգրանն այնքան էր վստահում նրան, որ Տիգրանակերտի ճակատամարտում նշանակում է իր գորքի ձախ թևի հրամանատար, և Ադիաբենների թագավորը մինչև վերջ կոպում է Տիգրանի կողքին հռոմեացիների դեմ⁶²: Ամենայն հավանականությամբ, գրավելով Ադիաբենեն, Տիգրանը այնտեղ գահին է նստեցնում իր մերձավորներից մեկին: Իհարկե կարելի է ենթադրել, որ դա եղել է տեղի հայերից, սակայն դժվար թե Հայաստանից դուրս ապրող հայերից որևէ մեկը այգչափ վայելեր Տիգրանի վստահությունը: Դա պետք է լիներ թագավորի շրջապատից որևէ մեկը: Անկասկած, այդպիսի մարդկանցից էր արքունի թիկնապահների պետը՝ Մաղխազը: Այդ պաշտոնը ժառանգաբար զբաղում էին խորխոռունիները: Ն.Ադոնցը համոզված է, որ «մաղխազություն» գործակալությունը Տիգրան II-ի ժամանակ արդեն գոյություն ուներ⁶³: Ս.Երեմյանը համարում է, որ խորենացու հիշատակած Մաղխազը Ադիաբենների արքայական տոհմի շառավիղներից էր⁶⁴: Սակայն վերը բերված փաստարկները ցույց են տալիս, որ հակառակը ավելի ճիշտ կլիներ՝ Ադիաբենների արքայական տոհմն էր սերում Մեծ Հայքի խորխոռունիներից կամ ազգակից տոհմերից: Հայկական պետության անվտանգությունը պահպանելու գործում մեծ էր նաև Բզնունիների դերը: Նրանց պարտականությունն էր հսկել Հայկական Տավրոսի կենտրոնական մասի Ձորա-պահակ կամ Տավրո-բերան լեռնանցքը: Այդտեղով էր անցնում Հայաստանի միջնաշխարհը Միջագետքին կապող ամենակարճ և մատչելի ճանապարհը, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև ռազմական կարևոր նշանակություն: Տավրո-բերան անվան հետ է կապվում Տուրուբերան նահանգի անունը⁶⁵: Ն.Ադոնցը համարում է, որ Տուրուբերանը սկզբնական շրջանում խորխոռունիների ժառանգական տիրույթի անվանումն էր, և միայն հետագայում այդ աշխարհագրական անունը տարածվեց նաև հարևան գավառների, որպես Մեծ Հայքի 15 նահանգներից մեկի, վրա⁶⁶:

Եվ այսպիսով, հայոց արքայի տեսանկյունից ո՞վ կարող էր ավելի հարմար լինել որպես միջագետքյան պետության գահի թեկնածու, քան այն տոհմերի ներկայացուցիչը, որոնք հսկում էին Մեծ Հայքի կենտրոնը Միջագետքի հետ կապող ճանապարհը և որոնց վստահված էր թագավորի անձնական անվտանգությունը: Ատվար Հայ բնակչության առկայությունը Ադիաբենեում հեշտացնում էր հայազգի թեկնածուի թագադրումը:

61 ՀժՊ. Հ. I, էջ 574:

62 L u c u l., XXI, XXVI, XXVII.

63 Н. А Д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 415.

64 ՀժՊ. Հ. I, էջ 832:

65 Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 45-46:

66 Н. А Д о н ц. Նշվ. աշխ., էջ 332:

Մ թ ա. 66թ. Հռոմի հետ կնքած պայմանագրով, այլ երկրների թվում Ագիաբենեն ևս անջատվեց Հայաստանից. անցնելով պարթևների դերիշխանության տակ: Վերջիններս հարկ համարեցին փոխել այնտեղի արքայատոհմը, քանի որ, ինչպես հետագա պատմությունը ցույց տվեց, Մոնոբազոսի ընտանիքը օրինապահ էր պարթևների նկատմամբ:

Այսպիսով, մ.թ.ա. I դ. սկզբից մինչև մ.թ. II դ. սկիզբը Ագիաբենեում իշխում էր մի արքայատոհմ, որը սերում էր Վանա լճի հյուսիս-արևմուտքի ազգակից ազնվական տներից՝ Բզնունիներից, Խորխոռունիներից, Մանավադյաններից, Ապահունիներից կամ Որգունիներից: Արքայատոհմը պահպանել էր իր ժառանգական տիրույթները Մեծ Հայքում: Այդ տիրույթների թվում էր Կորի գավառը, որտեղ մշակվում և (ելնելով այն փաստից, որ Հովսեփոս Փլավիոսը տեղյակ էր այդ մասին), կարող ենք ասել, որ նաև արտահանվում էր ամոմ կոչվող բույսը:

Ինչպես տեսանք, Ագիաբենեի արքայական ընտանիքը սերտորեն առնչվում էր Տիգրիսի գետաբերանին գտնվող Սպասինու Խարաքսի հետ: Ուշագրավ է, որ Սպասինու Խարաքսը օձանելիքի հումքի միջազգային առևտրի խոշորագույն կենտրոն էր⁶⁷: Այն Պարսից ծոցով կապվում էր անուշահոտությունների արտագրության կարևորագույն շղթաների հետ: Այստեղից ծովային առևտրական ճանապարհները տանում էին Արաբական թերակղզի, Աֆրիկայի հյուսիսարևելյան ափ, Հնդկաստան, որոնք օձանելիքի հումքի հիմնական արտադրողներն ու արտահանողներն էին⁶⁸: Միջնադարյան ականավոր գիտնական Բիրունին հիշատակում է Պարսից ծոցում՝ Բահրեյնում գտնվող Դարին նավահանգիստը, որը հնուց ի վեր օձանելիքի հումքի և օձանելիքի առևտրի կենտրոն էր⁶⁹:

Ագիաբենեի թագավորական տան անդամները, հավանաբար, Սպասինու Խարաքսում ունեցել են իրենց առևտրական ներկայացուցչությունը: Այնտեղ է բերվել Մեծ Հայքի Կորի գավառում, որը իրենց ժառանգական տիրույթն էր, արտադրվող ամոմը, իսկ այնտեղից տեղափոխվել օձանելիքի արտադրության կենտրոններ: Թերևս այդ առևտրի հետ էր կապված Իզատեսի համագործակցությունը հրեա վաճառականի հետ, որն ի վերջո համոզեց նրան ընդունել հրեական կրոնը:

Եվ այսպես, հին Հայաստանից միջազգային շուկա է արտահանվել ամոմ կոչված թանկարժեք անուշահոտ բույսը, որից Ալեքսանդրիայում, Հռոմում և այլ կենտրոններում օձանելիք էին սլափաստում:

67 Pl., NH, XII, 80; П с е в д о а р р и а н. Плавание вокруг Эритрейского моря, 35-36. — ВДИ, 1940, N2.

68 П с е в д о а р р и а н. Նշվ. աշխ.

69 А б у Р а й х а н Б е р у н и. Избранные произведения, т. IV, Сайда-на, перев. и примеч. У. И. Каримова, Ташкент, 1973, с. 131 — 132.

ОПЫТ ЛОКАЛИЗАЦИИ МЕСТНОСТИ, ИЗВЕСТНОЙ
ПРОИЗВОДСТВОМ ДУШИСТОГО РАСТЕНИЯ АМОМ*РУЗАН ПАЛАНДЖЯН*

Р е з ю м е

Античные авторы упоминают душистое растение амом, которое было одним из самых дорогих благовоний, ввозимых в Древний Рим. Амом входил в состав "Царских духов", которые изготовлялись специально для царей Парфии. Согласно свидетельству Диоскорида (I, 14) лучший амом произрастал в Армении. Иосиф Флавий (Antiquities, XX, 25) упоминает плодородную область Каррон, где земля была чрезвычайно благоприятна для культивирования амомы в большом количестве. Эта область принадлежала царю Адиабены Монобазу, однако находилась за пределами страны и была связана с легендой о Ноевом ковчеге. Последнее обстоятельство позволяет предположить, что Каррон находился в Армении. Наиболее вероятно, что это плодородная область Кори к северу от оз. Ван, в долине горы Сипан, с которой местное предание связывало легенду о потопе. Есть основания предположить, что царский дом Адиабены происходил из княжеских родов этого района, и область Кори была их владением. Производимый в этой области амом вывозили в Спасину Харакс, в устье р. Тигр, который был крупнейшим международным центром торговли благовониями.

AN ATTEMPT TO LOCALIZE THE DISTRICT FAMOUS FOR THE
PRODUCTION OF AN AROMATIC PLANT AMOMUM*RUZAN PALANJYAN*

S u m m a r y

Ancient authors mention the sweet-scented herb amomum, which was one of the most expensive perfumes, imported to Ancient Rome. Amomum was among the ingredients of "Royal perfume", which was prepared specially for the kings of Parthia. According to Dioscorides (I, 14) the best amomum grew in Armenia. Josephus in "Jewish Antiquities" (XX, 25) mentions the fertile district called Carron. The land there had excellent soil for the production of amomum in the greatest abundance. This district belonged to the king of Adiabene Monobazos, but was outside the country, and was connected with the legend about Noah's ark. This allows to suppose that the district of Carron was situated in Armenia. Most probably Carron is identical with the district called Cory to the north of lake Van, in the valley of Mount Sipan. There was a local tradition about the flood, related with Mount Sipan. We have reasons to suppose that the royal family of Adiabene originated from princely clans of this region, and the district of Cory was their property. Amomum, produced in this district, was exported to Spasinu Kharax, at the mouth of Tigris, which was the greatest centre of the world perfume trade.